

շունչ գրոց լատին թարգմանութեան մը: 1894 տարւոյն Expositor ուսումնաթերթին մէջ հրատարակուեցաւ այս գրուած: Յառաջբանին մէջ կոչնիբիւր կը խօսի Հ. Մ. Աւգերեան աշխատասիրութեան վրայ, յորում այս հատուածներն սրբոյն Ամբրոսիոսի գրուածներէն առնելով, միացուց յիւրում լատին թարգմանութեան փոխին խնդրոց՝ հրատարակելոց ի 1822: Միտք ունի կոնիբիւր եօթանասնից ընթերցուածոց տարբերութիւնքն հրատարակել ըստ հին հայկական թարգմանութեան փոխին խնդրոց ի գիրս ծննդոց:


Ասոնցմէ զատ ուրիշ հատուածներ ալ հրատարակած է կոնիբիւր և կը շարունակէ հրատարակել, որոց համար մեծապէս երախտագիտութիւն պարտի նմա հայ մատենագրութիւնն, ուր այդպիսի փութով ետեւէ կ'ըլլայ անոր զարգացման և ծանօթութեան յԱնգղիա: Իրմով կրնայինք փակել զսակաւոր թիւ անգղիացի հայագիտաց, եթէ մօտերս ծանօթացած չըլլայինք եր-

կու անգլիացւոց, իրենց եկեղեցական դասէն, որ եկան ի քաղաքս 1893 տարւոյն յուլիսին կատարելագործելու իրենց արգի սկսած և յառաջ տարած հայկական լեզուի ուսումը: Ասոնցմէ մէկն է Արմատաճ Ռոբինսոն և երկրորդն Ա. Բրուկկ. Կամբրիճի համալսարանին վարդապետք. որոց առաջինն՝ հրատարակած է Արիստիդէս Իմաստասիրին ջառագովակաւն մաբող, հայ՝ ասորի և յոյն բնագրովը և թարգմանութեամբք և բազմահմետ տեսութեամբ՝ ինչպէս արդէն ծանօթ են ամազգրիս ընթերցողք. և բաց ուրիշ նմանօրինակ եկեղեցական հնութեանէ ինչուան առ մեզ հասած անվաւեր (apocryphe) գրութեանց հրատարակութիւններէ, կը զբաղի հիմա Տատիանոսի՝ ամ սրբոյն Եփրեմի Համարարքառին ըննադատական երկասիրութեամբ: — Գիտեն ընթերցողք որ քանի մը տարիէ ի վեր հայկական լեզուի աթոռ մը հաստատուած է ի Թագաւորական դպրոցի (King's College) Լոնդոնայի:

(Շարայարեղի)



ՀԱՅՔ ԵՒ ԴԻՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ



(Տես յէջ 258)



Լատի հաւաքելով ցարդ ըսածնիս՝ Բնիկ-Արիականաց (Հայոց) առաջին պաշտամունքն եղած են: Ա. ԱՐԵԳ. — Աննիթական էութիւն, համազօր ԳՈՒ և Ի որոյ անուան համար ոչ նուիրական տաճարք և ոչ դասք Քաշանայից, ոչ պաշտամանց եղանակք, և ոչ անդրիք. ուստի և սրտի պատարագք անսահման կարգօք և վայրիւ կը մատուցուէին:

Բ. ՀՈՒՐ Աստուած, Միհր. — Աննիթական զօրութիւն Արեգի, պաշտօն ընդունած առհասարակ յԱրեաց, թէ և զանազան աստիճանաւ և կարգաւ: « Հաւք Արեւած » անունն դեռ ես ՚ի մեզ կենդանի է: Մըհրական ասոն իրանեան և Արիական աշխարհի առաջնակարգ հանդէսներէն էր. 20, 000 հայկական գեղեցկագոյն նոյզ ձիեր այդ ասական համախմբութեանց կը նուիրուէին Հայոց աշխարհէն, ըստ վկայութեան Քանեփոնի, Բարձր Հայոց Դերման գաւառի

Բազալայոն (Բազանունէր) գիւղն հոյակապ մեհեան մը կանգնուած կը յիշատակէ Ագաթանգեղոս Մհերական-հրոյ, կամ Հրային-մհեր. Թէ է « որդի Արամազդայ » կը կոչէ զայն :

Գ. ԱՐԵՊԱԿՆ ԵՒ ԱՐԵԻ. — Ակն Արեգի, խնամատար տեսանելի էից. և Արե կեանք և էութիւն արարածոց, միով երկինք և երկրայինք կեանք. իսկ միտառն խնամին և պահին: Արե միշտ բարձր է քան զԱրեզակն, ուստի 'ի մեզ պաշտուած են հնաւանդ ոնց « յարե ուրոցը բմպել », « զարե հատա նել », « յարեւ ընկենուի », « տրեւուք մեռ նիմ », « արեզ սիբեմ », և այլն, և այլն :

Արեզակն Հայոց՝ յիրանեանց Ահուրա-Մազդայի աչք կոչուած է, 'ի Բոճնաց Գիտի օհն, յեգիպտոս ինչպէս տեսանք (A. Sicca), Ոսիրիսի անուամբ կը յորմըրուէր, և որոյ ձեռքին իշխանական գաւազանն վրայ կը փայլէր « աչք » մը: Այսպէս դարձեալ 'ի մեզ « Ակն երկնից, « Պայծառ ակն », և այլն, ոճը: Հայոց հնագոյն քաղաքն Արմա-յի Արեզական և Լուսնի քաղերեաց և մեհենից նուիրականն էր :

Գ. ԿՐԱԿ. — ԱՍԻ. — Հրոյ տեսանելի էութիւն, և նիւթականացումն վերոգրեւոր: Աւելորդ է ըսելն Թէ 'ի Հայս և մանաւանդ յիրանս որչափ ծաղկած էր այս պաշտօն: Բազալան մշտավառ կրակի նուիրական վայրն էր: Յանյիշատակ ժամանակաց այդ նաւթային իւզն՝ որ մեր գիշերներն կը լուսաւորէ՝ յարգական պատիւ կ'ընդունէր 'ի մեր հարց, այդ նաւթաւոր՝ որով Բազու անմահացաւ, նոյնչափ բեղուն երբեմն արդէս այժմ, յաստուածունս յայտնութիւնք էին. Ներմութեան շփմամբ բռնկելովն՝ անձնաւորէր զհուրն աներևոյթ, Արամազդայ կրակ կուշտելով: Հետեւաբար կրակի պաշտօնն Արեգի և Արամազդայ դարձն վերջն է: Նոյնպէս Վասպուրականի Անձեւացեաց դաւառին մէջ, Պաշտ լերան մօտ, Բութ (կուռք) գիւղին մէջ, բաց ի մեհենէն Արամազդայ և Աստղ-կայ՝ կայր նաև և Տուն կրակի և անյազ հրոյ անդադար այրման » . Մ. Խորեն. (Ճ. Հռիփսիմ.), — Կրակապաշտութեան ապագայ խառութիւնքն, և Ատրուշանաց նուիրական բոցոյն 'ի Հայս Փրիստոնէութեան ժաւմանակ յաւաջ բերած սրտանմիկ հետեւութիւնքն՝ աւելորդ կարծեմ յիշեն: — Կրակն այրութեան նշանակն էր :

Ե. ԶՈՒՐ. — Կրակի հետ միասին կամ քիչ ձոնից, և սորա հակառակողն՝ կամ լաւ ևս՝ ընկերս զրուցեմ, պաշտօն և յարգ պիտի ընդունէր: Խորենացի Վասպուրականի մէջ կրակի և անյազ հրոյ տունս յիշէ յետոյ

կը յաւելու. « վառէին զկրակն՝ քոյրն, և աղբիւրն՝ զեղբայրն »: Յորում սխալ տեղափոխութիւն կը նկատէ Սարգիսեան Բ. Վրդ. և ուղղելով կը կարգայ, « վառէին զկրակն՝ եղբայրն, և զաղբիւրն՝ քոյրն », զուցէ իրաւամբ. սակայն փութալու չեմք. վասն զի հընար է Թէ 'ի մեզ այսօր արական սեռի վերաբերող տնտեսչ չէզոք իր մը՝ յանցեղումն իզական սեռի վերաբերած լինի. օրինակ կրնամք քաղել հին գերմանէն՝ յորում fravv sonne (տիկին արե) կը կոչուի Արեզակն. և լուսին Her mond (պարուն Լուսին). (Կրիմ, Գերմ. գիցար. հտ. Բ. էջ 666). Թէպէտ և Արե արուի նշանակ է, և Լուսին՝ իգի: Ուստի զուցէ այսպէս սրբազան բառով կրակն քոյր ըսուէր Արեզական, իսկ լուսն « Աղբիւր-եղբայր », իբր եղբայր կրակի, կամ « Աղբիւրակն » իբր հոտումն Արեզական: Աղբիւրակն անուամբ գեղեցիկ վայր մ'ունինք 'ի Հայս, 'ի Ստորին Բասեն, ընդ մէջ մեծ և փոքր կրկին և Դուս գիւղորէից: Այս վայր կոչի նաև Արծաթալորիւր, քաղցրաւամբ և վճիտ լոյն պատճառաւ: Ուշագրութեան արժանի է նաև Տակիստի Տարեգրութեանց (Գիրք Զ. էջ 375) յիշատակածն, որով կ'երևի թէ նախակայք մեծ պատիւ կու տային և գետոց, և Եփրատայ պայտօն կը մատուցանէին, և գուշակութիւնք և հմայք կատարուէին ըստ աճել կամ պակասել լուրց գետոյն :

Նոյն պաշտամունք կը տեսնուին նաև Վեդեան-Արեաց մէջ. Asvan և Aswati կը յորմըրին բնութեան կարողութիւնք. Sar-asvan (արու)՝ սերման և բեղմնաւորութեան պարգեւին. Sa-aswati էգ՝ սրբազան աստուածացեալ գեղքն, Ակն (Agni) Արանի (A-rani) ծնունդն՝ Ինդրայի (Indra) և Սոմայի (Soma) հետ Վեդեան առաջին երրորդութիւնն կը կազմէ — Սոյնպէս Իրանք երկնային քրտան և ութ ազատաց (IZAD) Թուոյն մէջ ունին (Ardouizour) « Արդուիձուր » Ազատն, զոր ուղիղ եթէ կարդամք՝ կ'ունենամք Արդեօ (Դե) « այսինքն է Հրոյ և Լոյց Ազատն », զոր Deva (Դե) Աստուած կը կարգան: Զոր իգութեան նշանակ էր :

Արեզական և կրակի և Լոյց մեծահանդէս աշխարհագրութեամբ տօներու սրբազան յիշատակէ՝ Նաւասարդի և Վարդավառի և կրաւ կազմութեան տօներովն, կենդանի մնացած են գեղ ևս Հայ սրտին և մտաց մէջ :

Զ. ԼՈՒՍԻՆ. — Նման Արեւ, եթէ ոչ Արեգ պայծառ ակն՝ գէթ աղօտ կանխել մը Արիական ձեղուն վառուած, տխուր գիւշերի միակ սփոփիչն լուսին, մշտափոփոխ և բազմակերպ, բարձրացաւ երբեմն 'ի պաշ-

տուն և յերկրպագութիւն Հայ աշխարհի մէջ, Արեւու և Լուսնի գլխաւոր մեհնանն էր յԱր- մաիւր, Լուսնի ընկեր և հարսն էր Արեւու: Դոյն այդ Լուսինն է, որ Արարատեան բը- նագաւառէ Տիւրքեսեանք ձեռքը կը տարուէր յարեւմտոս պոչոյամամբ և բառական իսկ նայութեամբ: (Տես S. Bugge, Etruskish und Armenisch հրատարակութեան «Lusxnei» բառն): — Քաղդէի թարգմատական ընտրական, լէն շատ ժամանակ վերջն ալ Լուսնի պաշտօն կը տանէին, և յայդ կը կրթէին Ասորեստան աշխարհն սամոռլ: M. Fontane Ասիական գրոց մէջ հետեւեալ համառօտ նկարագիրն կ'ընէ. « La lune si singulière dans ses actes, était la divinité naturelle de cette religion, et c'est elle, qui, « sous les riches vêtements d'Istar » devint l'adoration per- petuelle des Assyriens, avec le Soleil pour frère, pour époux ».

Ի. ԱՐՈՒՍԵՍԱԿ ԵՒ ԱՐԵՎԱՆՍՅԱՆ. — Արեւ- սեկն և Արշալուսի և Վերջալուսի հմայական գեղն՝ անհնարին էր դիցաբանական բանաս- տեղծութիւնէն և փափուկ վրձինէն վրիպել: Արեգական և Լուսնի գեղանի տարերք կամ իմանալի քոյրերն էին. « քանչիկի պար- զութեամբ և գողտրիկ երևութով հրապուրիչ էին Աստուածոց անգամ. այդ պահուն կը տեսնեմք երկնից լաշն՝ լուսաւոր Արեգակն վարագրեալ՝ լոգարանէն գլուխն 'ի վեր երե- լել, այդ պահուն Անուշիւկ փայլուն երկնից Աստղիկ՝ կը տեսնեմք իւր յաւերժաւարանց գունդէն մեկուսի, վճիտ առուակի մը ափանց վրայ, զգլխի գեղեցկութեամբն հորանի՝ ճփճփիկ լողոց մէջ թաւալի: Այնպիսի քաղցր, այնպիսի ցանկալի է առաջին և վերջին լոյսն՝ մինչ Հնդկի-Արին կը գոչէ. « Ո՛վ Աստուածք, Աղլափանն հին կերպարանն փոփոխելով՝ նորոգելով, իւր հարսին սիրոյն արժանաւոր ըրիք »: « Նորոգութիւնն », « փոփոխու- թիւնն » Արշալուսն և Վերջալուսն է: —

Զմեռ ուեղր ընդարձակել այլ ևս մեր խօս- քն՝ առանց ընդերկրաւ քննելու ուրիշ կա- ռեւորագոյն խնդիր մը, որ եթէ ոչ մեկնու- թիւն բոլոր նախկին ըրածներուս, գեթ ցարդ մթին մնացած հետաքրքրարժէ և էական կէտի իր բացատրութիւնն է. և այս բա- ցարձակ շրջնայեալ Արիական սեռին վե- րոյիշեալ պաշտամանց և Հայ տոհմային պատ- մութեան հետ: —

Գիցաբանութիւնն 'ի սպառ առասպելնե- լու գասաւորութիւն մը համարել, չժախի աշ- սոր Հնախօսութիւնն, այլ բացարձակ յայտնի է՝ որ էութիւն ունեցող իրեր՝ մանաւանդ մարդկային դասէն լաւութեամբ և կամ եր- բուն յոռութեամբ հնչակաւոր անձինք՝ յա-

ռաջին ժամանակաց անմոռաց յիշատակեալք, աստուածացեալք, 'ի պատիւ 'ի պաշտօն և 'ի փառաբանութիւն կոչեցեալք են. և յան- ցանել ժամանակաց վէպերու և վիպասանե- լու բերան ինկած՝ յոմանց նորօրինակ նեա- տելով, յայլոց պանչացեալ գովաբանելով, յոմանց՝ բոտ անձնական կամ տոհմային զա- նազան շահուց մին, բարձրանալով և միտն ընդ քարշ տեղելով, խառն 'ի խառն գետե- տելով, առասպելաց կարգն անցուցած են ժա- մանակաց հետք Գիցաբանութիւնն:

ՀԱՅԿ. — Արիական ամենէն բարձրա- գոյն պաշտաման գաղափարականին հետ միա- ցած կը գտնեմք վսեմ անձնաւորութեան մը հմայիչ գաղափարն: — Արեգն՝ Արիական ցեղի գերաբուն և գերագոյն էն, Հնդկի-Ա- րեայ մէջ ինքրա անուամբ վսեմ և հաւուոր, պանչիւրի և բարերար անձնաւորութիւն մը կը հանդիսանայ: Զուտ գաղափարական ան- իմանալի և անտես էակն՝ տեսանելի և ըմ- բռնելի յատկութեամբ կը բացատրուի. Ին- դրա (Indra=հուր) բարերար է, սակայն չա- րաց կը հակառակի և կը պատժէ. ամբար- տուան սինլըորներու դէմ մարտ կը հրատա- րակէ, կը յաղթանակէ, և հասարակաց թըլ- նամին դիտպատտ կը ձգէ: Արուսեակն շող- շողուն նոյն դիմագ կը գծագրի. Արշալուսն՝ առաջին լոյս նմանօրինակ նկարագիր կ'ըզ- գենուն՝ 'ի մի բան՝ որ ինչ (ինքոյայի) Արե- գական հմայութիւն ունի և կամ նորա առ- դիւնքն է՝ Արիական առհասարակ ցեղին քաղցր և շարժուն Տերն՝ հոլայն և հերոսն է: — Տեսնեմք ծագումն:

Նախահայն Արիական նախամօր հարու- գատ տնականն և աւանդապա՛հ՝ Արեգի պաշ- տօնն միշտ սրբազան երկիւղաժողութեամբ պա- հելովն հանդիւրձ՝ երկնային կամարին բարձ- րագոյն կանաւին մէջ Արեգական (Ինդ- րայի) հաւասար ուսած է միշտ նկատել բարձ- րագոյն անձնաւորութիւն մը, զոր իր փրկիչն և Հայր, Տէր և իշխան ճանչցած է: Տանք Հայկայ նկարագիրն, զոր սպա ինքոյայի պիտի կրկնեմք. « Չեղապատշաճն և անձ- նեայ, քաղաքանգուրն և խայտակն », խուճմն և ուշիմ՝ հոպիւս իւր տունն և ստացուածն ինչ անուն բռնաւորի մը յարձակմանէն պա- տերազմու. կ'որոշէ ազատել. կը ժողվէ իւր քաղերն, եռանկիւն կը գետեղէ, կը քաշէ գաղեղն և թշնամին կը կործանէ:

Ահա Արիական բնագաւառին Արարատեան տան՝ և Հայկեան աշխարհի սրբազան յիշա- տակաց մեծադոյնն, զոր դարերու և ժամա- նակաց կոյտք չկարացին մարել և անշնչա- ցունել:

(Շարայարեկի)